

2. Բնութեան օրէնքի բանաձեւը

«Այնպէս վարուէ՛, իբր թէ վարմունքիդ անձնական կանոնը (մաքսիմը), կամքիդ միջոցով, ընդհանուր բնութեան օրէնք դառնայ»:

Կանտ, ընդհանրականացման բանաձեւէն անմիջապէս, քանի մը տող ետք, կը յիշէ նմանօրինակ իր բնութեան օրէնքի բանաձեւը, որու քննարկումն ալ նմանակերպ է, նկատի ունենալով որ միայն մէկ *անպայմանական հրամայական* կայ:

Կանտի բանաձեւի այս երկրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղայ՝ *բնութեան օրէնք* հասկացութիւնը: Կանտի համաձայն, փորձառական - զգայական բնութիւնը նուազ կարելորդութիւն ունի, որովհետեւ ան ունի իր իւրայատուկ օրէնքները եւ ինքնավարութեան (ինքնօրինութեան, Autonomy) փոխարէն, այլօրինութիւնն (Heteronomy) է այստեղ իշխողը: Այս պատճառով հարկ է, որ զուտ կամքի երեւակայութիւնը գերզգայական բնութեան մը նախագիծը տրամադրէ, ուր օրէնքները կախեալ չըլլան փորձառական պայմաններէն եւ միայն զուտ բանականութեան պատկանին: Այլ խօսքով, հեղինակի դրութեան մէջ մտնելով, պետք է բնութեան նոր օրինակարգ մը պատկերացնել, որ ինքնին անառարկելի ըլլայ, կարելիութիւն ունենայ վարուելակերպ ծրագրելու եւ անձնական կանոնները (maxim) բանականութեան յարմարցնելու: Կանտի համաձայն, թէեւ կարելի է անձնական կանոնի (մաքսիմ) մը *պարտաւորութեան համաձայն* ըլլալը անոր բնութեան համաձայն ըլլալէն եզրակացնել, սակայն կարելի չէ հաստատել անոր՝ *պարտաւորութենէն բխած* ըլլալը: Ասոր կողքին, սակայն, մարդկային միտքը *բարոյական օրէնք* մը պատկերացնելու համար, երբեք ստիպուած չէ բնութեան օրէնքին դիմել:

Կանտ, *բնութեան օրէնքի բանաձեւը* կը ներկայացնէ, որպէս օժանդակ բանաձեւ, աւելի յստակացնելու համար բարոյականութեան սկզբունքը եւ *բարոյական օրէնքը*, որ իր *անպայմանական հրամայականն* է: Այնուհետեւ Կանտ կը յիշէ իր նշանաւոր ու պատկերաւոր չորս օրինակները, որոնք (այս աշխատասիրութեան մէջ) տեղադրուած են հինգ բանաձեւերու վերջաւորութեան (Էջ 174):

3. Մարդկութեան բանաձեւը

«Այնպէս վարուէ՛, որ դուն մարդկութիւնը, քու անձի եւ ուրիշ անձի համար, երբեւիցէ, որպէս նպատակ եւ երբեք լոկ որպէս միջոց օգտագործես»:

Կանտի բանաձեւի այս երրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղան՝ *նպատակ* եւ *միջոց* հասկացութիւնները: Կանտի համաձայն, բոլոր նիւթական նպատակները իրականացնելու համար պետք ունինք միջոցներու. այս պատճառով անոնք (նիւթական նպատակները) կ'ենթարկուին՝ *ենթադրա-կան հրամայականին* (Hypothetical imperative) եւ չեն կրնար «ինքնին» (գերմ.՝ „an sich“, անգլ.՝ „in itself“) նպատակ ըլլալ: Յիշենք այս առնչութեամբ մեզի ծա-նօթ